ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խորհրդի 09.03.21թ. կայացած թիվ 9.20-21 նիստի

Նիստը անցկացվեց հեռավար: Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 27-ը:

Հաստատվեց հետևյալ օրակարգը՝

1. Պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի դոցենտ **Արամ Մանասելյանի** Ա.04.07 «Կոնդենսացված միջավայրերի ֆիզիկա» մասնագիտությամբ գիտական թեզը ղեկավարելու թույլատվություն տրամադրելու հարցը:

2. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների թեմաների և ղեկավարների հաստատում:

Լսեցին Պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի դոցենտ **Արամ Խաչիկի Մանասելյանի** Ա. 04. 07 «Կոնդենսացված միջավայրերի ֆիզիկա» մասնագիտությամբ գիտական թեզի ղեկավարման հարցը:

Ելույթ ունեցավ Արամ Մանասելյանը: Նա ներկայացրեց այդ բնագավառում կատարված աշխատանքները, թեզի թեման և արդիականությունը:

Որոշեցին Հաշվի առնելով Ա. Մանասելյանի կատարած աշխատանքները տվյալ բնագավառում, միջնորդել ԲՈԿ-ին **Արամ Մանասելյանի**

Ա.04.07 «Կոնդենսացված միջավայրերի ֆիզիկա» մասնագիտությամբ գիտական թեզը ղեկավարելու թույլատվություն տրամադրելու համար:

Լսեցին Պինդ մարմնի ֆիզիկայի հեռակա ասպիրանտ Արսեն Աղաջանյանի թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին Հաստատել հեռակա ուսուցման ասպիրանտ Արսեն Աղաջանյանի հետևյալ թեման՝ ՝՝ Քվանտային կետերով ցանցերի և արևային տարրերի ֆոտոէլեկտրական բնութագրերի վրա արտաքին գործոնների ազդեցության տեսական ուսումնասիրություն՝՝:

Գիտական ղեկավար նշանակել Պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի դոցենտ ֆ.մ.գ.թ. Արամ Մանասելյանին:

Լսեցին Օպտիկայի ամբիոնի հեռակա ասպիրանտ Հովակիմյան Մարիա թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին Հաստատել հեռակա ուսուցման ասպիրանտ Հովակիմյան Մարիայի հետևյալ թեման՝ ՝՝ Լազերային ճառագայթման պարամետրերի ղեկավարումը հեղուկ բյուրեղային ալիքաթիթեղների միջոցով՝՝:

Գիտական ղեկավար նշանակել Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան, Օպտիկայի ամբիոնի պրոֆեսոր ֆ.մ.գ.դ. Ռ. Հակոբյանին:

Լսեցին Միջուկային ֆիզիկայի ամբիոնի հեռակա ասպիրանտ Ավետիս Հովսեփյան թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին Հաստատել հեռակա ուսուցման ասպիրանտ Ավետիս Հովսեփյանի հետևյալ թեման՝ ՝՝Աշխատած միջուկային վառելիքի պահպանման ավազանում ծանր վթարների ընթացքում ֆիզիկական երևույթների ուսումնասիրումը և ռադիոակտիվ արտանետումների գնահատումը՝՝:
Գիտական ղեկավար նշանակել Միջուկային ֆիզիկայի ամբիոնի ասիստենտ ֆ.մ.գ.թ. Սուրեն Բզնունուն:

Ֆիզիկայի Ֆակուլտետի
գիտական խորհրդի նախագահ՝ Ռ.Ս. Հակոբյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ Գ.Հ. Հովհաննիսյան